

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**

**ԵՎ**

**ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**

**ՄԻՋԵՎ**

**ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Սիրիայի Արաբական Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

հանդիսանալով «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի կողմեր, որը ստորագրման համար բաց է 1944 թվականի դեկտեմբերի 7-ից՝ Չիկագոյում,

ցանկանալով կնքել Համաձայնագիր՝ իրենց պետությունների համապատասխան տարածքների միջև օդային հաղորդակցություններ հաստատելու և նման հաղորդակցությունների հետ կապված միջազգային համագործակցությունը հնարավոր առավելագույն չափով խթանելու նպատակով,

համաձայնեցին հետևյալի մասին.

**ՀՈԴՎԱԾ 1**

**Առարկան**

Պայմանավորվող կողմերը համաձայնում են համագործակցել օդային հաղորդակցությունների ոլորտում՝ սույն Համաձայնագրին, ինչպես նաև իրենց պետությունների ազգային օրենսդրությանը և միջազգային պարտավորություններին համապատասխան:

**ՀՈԴՎԱԾ 2**

**Սահմանումները**

Սույն Համաձայնագրի նպատակով՝ բացառությամբ, եթե համատեքստն այլ բան չի պահանջում՝

(a) «Չիկագոյի կոնվենցիա» եզրույթը նշանակում է՝ «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիա, որը ստորագրման համար բաց է 1944 թվականի դեկտեմբերի 7-ից՝ Չիկագոյում, և ներառում է ցանկացած Հավելված, որն ընդունվել է այդ Կոնվենցիայի 90-րդ հոդվածի համաձայն, և Կոնվենցիայի 90-րդ և 94-րդ հոդվածների համաձայն կատարված՝ այդ Հավելվածների կամ Կոնվենցիայի ցանկացած փոփոխություն՝ այնքանով, որքանով այդ Հավելվածները կամ փոփոխությունները կիրառելի են երկու Պայմանավորվող կողմերի համար,

(b) «ավիացիոն իշխանություններ» եզրույթը նշանակում է՝ Հայաստանի Հանրապետության դեպքում՝ Քաղաքացիական ավիացիայի կոմիտե, և Սիրիայի Արաբական Հանրապետության դեպքում՝ Սիրիայի քաղաքացիական ավիացիայի իշխանություն, և ցանկացած անձ կամ մարմին, որը կարող է լիազորված լինել՝ իրականացնելու վերոնշյալ մարմինների գործառույթները,

(c) «նշանակված ավիաընկերություն» եզրույթը նշանակում է՝ ավիաընկերություն, որը նշանակվել և լիազորվել է սույն Համաձայնագրի 5-րդ Հոդվածի համաձայն,

(d) «տարածք» եզրույթը Պայմանավորվող կողմերի պետությունների առնչությամբ ունի Չիկագոյի կոնվենցիայի 2-րդ հոդվածով վերագրված իմաստը,

(e) «օդային հաղորդակցություն», «միջազգային օդային հաղորդակցություն», «ավիաընկերություն» և «կանգառ ոչ առևտրային նպատակներով» եզրույթներն ունեն Չիկագոյի կոնվենցիայի 96-րդ հոդվածով, համապատասխանաբար, վերագրված իմաստները,

(f) «սույն Համաձայնագիր» եզրույթը նշանակում է սույն Համաձայնագիրը և ներառում է դրան կից Հավելվածը և դրա ցանկացած փոփոխությունը,

(g) «սակագին» նշանակում է՝ ուղևորների, ուղեբեռի և բեռի փոխադրման համար վճարվող գներ և պայմաններ, որոնց համաձայն կիրառվում են այդ գները, ներառյալ գործակալական և այլ հարակից ծառայությունների գները և պայմանները, սակայն բացառելով փոստի փոխադրման համար վճարները և պայմանները,

(h) «օգտագործողից գանձվող վճարներ» եզրույթը նշանակում է՝ օդանավակայանի գույքի կամ սարքավորումների կամ աերոնավիգացիոն սարքավորումների՝ ներառյալ օդանավերի, դրանց անձնակազմի, ուղևորների և բեռի համար հարակից ծառայությունների և սարքավորումների տրամադրման դիմաց իրավասու իշխանությունների կողմից ավիաընկերություններից գանձվող կամ այդ իշխանության կողմից թույլատրված վճարը:

(i) «տարողություն» եզրույթը նշանակում է՝

(I) օդանավի առնչությամբ՝ տվյալ օդանավի կոմերցիոն բեռնվաճառությունը այդ երթուղում,

(II) սահմանված օդային հաղորդակցության առնչությամբ՝ նման հաղորդակցությունում օգտագործվող օդանավի տարողությունը՝ բազմապատկած տրված ժամանակահատվածում այդ երթուղում նման օդանավի կողմից շահագործվող հաճախականությամբ,

(j) «փոխադրում» եզրույթը նշանակում է՝ ուղևորներ, ուղեբեռ, բեռ և փոստ:

(k) «ICAO (ԻԿԱՕ)» նշանակում է՝ Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունը:

### ՀՈԴՎԱԾ 3

#### Չիկագոյի կոնվենցիայի կիրառելիությունը

Սույն Համաձայնագրի դրույթները ենթակա են Չիկագոյի կոնվենցիայի դրույթներին այնքանով, որքանով այդ դրույթները կիրառելի են միջազգային օդային հաղորդակցությունների նկատմամբ:

## ՀՈԴՎԱԾ 4

### Իրավունքների տրամադրումը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմին միջազգային օդային հաղորդակցությունների առնչությամբ տրամադրում է հետևյալ իրավունքները.

a) իր տարածքի վրայով առանց վայրէջքի թռիչք կատարելու իրավունք,

b) իր տարածքում ոչ առևտրային նպատակներով կանգառներ կատարելու իրավունք:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմին տրամադրում է սույն Համաձայնագրում սահմանված իրավունքները սույն Համաձայնագրի Հավելվածում սահմանված երթուղիներով միջազգային օդային հաղորդակցությունների շահագործման նպատակով: Նման հաղորդակցությունները և երթուղիները այսուհետ, համապատասխանաբար, կոչվում են «համաձայնեցված հաղորդակցություններ» և «սահմանված երթուղիներ»: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերություններին սահմանված երթուղով համաձայնեցված հաղորդակցություն շահագործելիս, ի լրումն սույն Հոդվածի 1-ին կետում սահմանված իրավունքների, կտրամադրվի սույն Համաձայնագրի Հավելվածով տվյալ երթուղում սահմանված պարբերություններում ուղևորներ, ուղեբեռ և բեռ, ներառյալ փոստը, օդանավ վերցնելու և օդանավից իջեցնելու նպատակով մյուս Պայմանավորող կողմի տարածքում կանգառներ անելու իրավունք:

3. Սույն Հոդվածի 2-րդ կետում ոչինչ չպետք է դիտվի որպես իրավունքի տրամադրում մի Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությանը մյուս Պայմանավորվող կողմի տարածքում վարձատրմամբ կամ փոխհատուցմամբ օդանավ վերցնելու ուղևորներ, ուղեբեռ և բեռ, ներառյալ փոստը, դեպի մյուս Պայմանավորվող կողմի տարածքի մեկ այլ պարբերություն փոխադրելու նպատակով:

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի այն ավիաընկերությունները, որոնք նշանակված չեն սույն Համաձայնագրի 5-րդ Հոդվածի համաձայն, նույնպես կօգտվեն սույն Հոդվածի 1-ին կետի «a» և «b» ենթակետերում նշված իրավունքներից:

5. Եթե գինված հակամարտության, քաղաքական հուզումների կամ զարգացումների կամ արտակարգ և անսովոր հանգամանքների պատճառով Պայմանավորվող կողմերից մեկի նշանակված ավիաընկերությունը չի կարող շահագործել հաղորդակցությունը իր սովորական երթուղով, մյուս Պայմանավորվող կողմը պետք է գործադրի իր առավելագույն ջանքերը՝ ապահովելու համար այդպիսի հաղորդակցության շարունակական շահագործումը երթուղիների համապատասխան ժամանակավոր վերադասավորման միջոցով (ներառյալ նման ժամանակահատվածի համար իրավունքների տրամադրումը, այնքան ժամանակով, որքան անհրաժեշտ կլինի հաղորդակցությունների շահագործման համար), որոնք կորոշվեն Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

6. Յուրաքանչյուր նշանակված ավիաընկերություն իրավունք ունի առանց որևէ խտրականության օգտվել Պայմանավորվող կողմի կողմից տրամադրված բոլոր օդային ուղիներից, օդանավակայաններից և այլ սարքավորումներից:

## ՀՈԴՎԱԾ 5

### Ավիաընկերությունների նշանակումը և լիազորումը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի նշանակելու մեկ կամ մի քանի ավիաընկերություններ՝ սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցությունների շահագործման նպատակով, և այդ մասին գրավոր եղանակով դիվանագիտական ուղիներով տեղեկացնել մյուս Պայմանավորվող կողմին:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի հետ կանչելու կամ փոփոխելու համաձայնեցված հաղորդակցությունների շահագործման համար նման նշանակումը՝ գրավոր ծանուցմամբ դիվանագիտական ուղիներով տեղեկացնելով մյուս Պայմանավորվող կողմին:

3. Մյուս Պայմանավորվող կողմը, նման նշանակման մասին տեղեկատվություն ստանալով, պետք է սույն Հոդվածի 4-րդ կետի դրույթների համաձայն նշանակված ավիաընկերությանը կամ ավիաընկերություններին անհապաղ տրամադրի համապատասխան շահագործման լիազորություններ:

4. Մի Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունները կարող են մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունից պահանջել ապացույցել, որ նա ի վիճակի է կատարելու այն օրենքներով և կանոնակարգերով նախատեսված պայմանները, որոնք սովորաբար և ողջամտորեն նշված իշխանությունների կողմից կիրառվում են միջազգային օդային հաղորդակցությունների շահագործման նկատմամբ՝ համաձայն Չիկագոյի կոնվենցիայի դրույթների:

5. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի հրաժարվելու տրամադրել սույն Հոդվածի 3-րդ կետում նշված շահագործման լիազորությունները կամ սահմանելու այնպիսի պայմաններ, որոնք ինքն անհրաժեշտ կարող է համարել նշանակված ավիաընկերության կողմից սույն Համաձայնագրի 4-րդ Հոդվածի 2-րդ կետով նախատեսված իրավունքներից օգտվելու համար, ցանկացած դեպքում, երբ նշված Պայմանավորվող կողմը չունի ապացույցներ, որ այդ ավիաընկերության սեփականության իրավունքի էական մասը (հիսուն (50) տոկոսից ավել) և փաստացի հսկողությունը պատկանում են այդ ավիաընկերությանը նշանակված Պայմանավորվող կողմին կամ նրա քաղաքացիներին:

6. Եթե ավիաընկերությունը նշանակվել և լիազորվել է նման ձևով, նա կարող է սկսել համաձայնեցված հաղորդակցությունների շահագործումը՝ պայմանով, որ սակագները հաստատված են սույն Համաձայնագրի 8-րդ Հոդվածի համաձայն:

## ՀՈԴՎԱԾ 6

### Շահագործման լիազորությունների չեղյալ հայտարարումը կամ կասեցումը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի չեղյալ հայտարարելու շահագործման լիազորությունը կամ կասեցնելու մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերության կողմից սույն Համաձայնագրի 4-րդ Հոդվածի 2-րդ կետում նշված իրավունքների իրականացումը կամ առաջադրելու այնպիսի

պայմաններ, որոնք նա անհրաժեշտ կհամարի այդ իրավունքների իրականացման համար.

a) ցանկացած դեպքում, երբ նա բավարար ապացույցներ չունի, որ ավիաընկերության սեփականության իրավունքի էական մասը (հիսուն (50) տոկոսից ավել) և փաստացի հսկողությունը պատկանում են այդ ավիաընկերությանը նշանակած Պայմանավորվող կողմին կամ նրա քաղաքացիներին,

b) այն դեպքում, երբ այդ ավիաընկերությունը չի համապատասխանում այն օրենքներին կամ կանոնակարգերին, որոնք սովորաբար կիրառվում են այդ իրավունքները տրամադրած Պայմանավորվող կողմի կողմից միջազգային օդային հաղորդակցությունների նկատմամբ,

c) եթե այդ ավիաընկերությունն այլ կերպ չի կարողանում իր շահագործումն իրականացնել սույն Համաձայնագրի 10-րդ Հոդվածում (Ավիացիոն անվտանգություն) և 11-րդ Հոդվածում (Թռիչքային անվտանգություն) ամրագրված պայմանների համաձայն:

2. Եթե շահագործման լիազորության անհապաղ չեղյալ հայտարարելը, կասեցնելը կամ սույն Հոդվածի 1-ին կետում նշված պայմանների պարտադրումը էական չէ օրենքների կամ կանոնակարգերի հետագա խախտումները կանխելու համար, նման իրավունքն իրականացվում է միայն մյուս Պայմանավորվող կողմի հետ խորհրդակցությունից հետո:

## **ՀՈԴՎԱԾ 7**

### **Համաձայնեցված հաղորդակցությունների շահագործումը կառավարող սկզբունքները**

1. Երկու Պայմանավորվող կողմերի նշանակված ավիաընկերությունների համար պետք է լինի արդար և հավասար հնարավորություն՝ շահագործելու համաձայնեցված հաղորդակցությունները սույն Համաձայնագրի Հավելվածում նշված՝ սահմանված երթուղիներով:

2. Համաձայնեցված հաղորդակցությունները շահագործելիս յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունները պետք է հստակ հաշվի առնեն սահմանված երթուղիներով օդային փոխադրումների նկատմամբ հանրության պահանջները և, որպես իրենց առաջնային նպատակ, պետք է ունենան բեռնվածության համար ողջամիտ գործակցով այնպիսի տարողության տրամադումը, որը բավարար կլինի այն Պայմանավորվող կողմի տարածքից եկող կամ այդ տարածք մեկնող ուղևորների և բեռների՝ ներառյալ փոստի փոխադրման նկատմամբ ներկայիս և ողջամտորեն սպասվելիք պահանջները կատարելու համար, որը նշանակել է ավիաընկերությանը: Ավիաընկերությանը նշանակված պետությունից բացի՝ այլ պետությունների տարածքներում սահմանված երթուղիների կետերում ուղևորների և բեռների՝ ներառյալ փոստի փոխադրման ապահովումը և՛ օդանավ վերցնելիս, և՛ իջեցնելիս պետք է իրականացվի այն ընդհանուր սկզբունքների համաձայն, որ տարողությանը պետք է համապատասխանի՝

a) այն Պայմանավորվող կողմի տարածքից և դեպի այդ տարածք փոխադրումների նկատմամբ պահանջներին, որը նշանակել է ավիաընկերությանը,

b) այն տարածաշրջանում առկա փոխադրումների նկատմամբ պահանջներին, որի միջով ավիաընկերությունն իրականացնում է իր թռիչքը՝ հաշվի առնելով այդ տարածաշրջանի պետությունների ավիաընկերությունների կողմից հաստատված այլ տրանսպորտային հաղորդակցությունները,

c) ավիաընկերության միջանցիկ շահագործումների պահանջներին:

## ՀՈԴՎԱԾ 8

### Սակագները

1. Երկու Պայմանավորվող կողմերի տարածք/տարածքից/տարածքով միջազգային օդային հաղորդակցությունների նկատմամբ կիրառվող սակագները նշանակված ավիաընկերությունների կողմից պետք է սահմանվեն ողջամիտ մակարդակով՝ պատշաճ ուշադրություն դարձնելով բոլոր համապատասխան գործոնների՝ ներառյալ շահագործման ծախսերի, հիմնավոր շահույթի և այլ ավիաընկերությունների սակագների վրա:

2. 1-ին կետի համաձայն սահմանված սակագները ենթակա չեն մի Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունների կողմից մյուս Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանություններին ներկայացման: Չնայած վերոնշյալին՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի միջամտելու, եթե անհրաժեշտ է՝

a) կանխել անհիմն խտրական գները կամ գործելակերպը,

b) պաշտպանել սպառողներին, գերիշխող դիրքի չարաշահմամբ պայմանավորված, չհիմնավորված բարձր կամ սահմանափակող գներից, և

c) պաշտպանել ավիաընկերություններին արհեստականորեն ցածր գներից:

3. Չնայած վերոգրյալին՝ մի Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունները մյուս Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունների կողմից պահանջի դեպքում պետք է նրանց տրամադրեն տեղեկատվություն սահմանված սակագների մասին՝ այդ իշխանությունների կողմից նշված եղանակով և ձևաչափով:

## ՀՈԴՎԱԾ 9

### Հարկերից, մաքսատուրքերից և այլ գանձումներից ազատումը

1. Մի Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերության (ավիաընկերությունների) կողմից միջազգային օդային հաղորդակցություններում շահագործվող օդանավը, ինչպես նաև այդպիսի օդանավում գտնվող դրանց հիմնական սարքավորումները, պահեստամասերը, վառելիքի և քսայուղերի պաշարները ու օդանավում առկա պաշարները (ներառյալ սննդամթերքը, ըմպելիքները և ծխախոտը) մյուս Պայմանավորվող կողմի տարածքում ազատվում են բոլոր մաքսատուրքերից, տեսչական հարկերից և այլ գանձումներից կամ հարկերից՝ պայմանով, որ այդ սարքավորումները և պաշարները մնան օդանավում մինչև դրանց վերարտահանումը:

2. Վառելիքի և քայուղերի պաշարները, պահեստամասերը, հիմնական սարքավորումները և օդանավի պաշարները, որոնք Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի տարածք ներմուծվել են մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերության (ավիաընկերությունների) կողմից կամ վերցվել են նրա (նրանց) անունից կամ այդ նշանակված ավիաընկերության (ավիաընկերությունների) կողմից շահագործվող օդանավ և նախատեսված են բացառապես միջազգային օդային հաղորդակցությունների շահագործման ժամանակ, պետք է ազատվեն բոլոր տեղական հարկերից և գանձումներից, ներառյալ այն մաքսատուրքերը և տեսչական վճարները, որոնք սահմանված են առաջին Պայմանավորվող կողմի տարածքում, նույնիսկ այն դեպքում, երբ այդ պաշարները պետք է օգտագործվեն երթուղու այն հատվածներում, որոնք անցնում են այն Պայմանավորվող կողմի տարածքով, որտեղ դրանք վերցվել են օդանավ: Կարող է պահանջվել, որ վերոնշյալ նյութական միջոցները պահվեն մաքսային վերահսկողության կամ հսկողության տակ:

3. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի օդանավում գտնվող օդանավի հիմնական սարքավորումները, պահեստամասերը, պաշարները և վառելիքի ու քայուղերի պաշարները կարող են մյուս Պայմանավորվող կողմի տարածքում բեռնաթափվել միայն այդ Պայմանավորվող կողմի մաքսային իշխանությունների հաստատմամբ, որոնք կարող են պահանջել, որ այդ նյութերը դրվեն իրենց հսկողության ներքո այնքան ժամանակ, մինչև դրանք վերարտահանվեն կամ այլ կերպով իրացվեն՝ մաքսային կանոնակարգերին համապատասխան:

## ՀՈԴՎԱԾ 10

### Ավիացիոն անվտանգությունը

1. Միջազգային իրավունքով նախատեսված իրենց իրավունքների և պարտավորությունների համաձայն՝ Պայմանավորվող կողմերը վերահաստատում են, որ քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ անօրինական միջամտության գործողություններից պաշտպանելու միմյանց հանդեպ իրենց պարտավորությունը կազմում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը: Առանց սահմանափակելու միջազգային իրավունքով նախատեսված իրենց իրավունքների ու պարտավորությունների ամբողջականությունը՝ Պայմանավորվող կողմերը պետք է մասնավորապես գործեն համաձայն 1963 թ. սեպտեմբերի 14-ին Տոկիոյում ստորագրված «Օդանավերի մեջ կատարվող հանցագործությունների և որոշակի այլ գործողությունների մասին» կոնվենցիայի, 1970 թ. դեկտեմբերի 16-ին Հաագայում ստորագրված «Օդանավերի անօրինական զավթման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի, 1971 թ. սեպտեմբերի 23-ին Մոնրեալում ստորագրված «Քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված անօրինական գործողությունների դեմ պայքարի մասին» կոնվենցիայի և 1988 թ. փետրվարի 24-ին Մոնրեալում ստորագրված «Միջազգային քաղաքացիական ավիացիան սպասարկող օդանավակայաններում բռնության անօրինական գործողությունների վնասազերծման մասին» արձանագրության, ինչպես նաև ավիացիոն անվտանգության ոլորտի երկու Պայմանավորվող կողմերի համար պարտադիր ցանկացած այլ համաձայնագրի դրույթների համաձայն:

2. Պայմանավորվող կողմերը խնդրանքի դեպքում միմյանց տրամադրում են անհրաժեշտ ողջ օժանդակությունը՝ կանխելու համար քաղաքացիական օդանավերի ապօրինի զավթման գործողությունները և նման օդանավերի, դրանց ուղևորների և անձնակազմերի, օդանավակայանների և անօդանավագացիոն միջոցների անվտանգության դեմ ուղղված ապօրինի այլ գործողությունները և քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված ցանկացած այլ սպառնալիք:

3. Պայմանավորվող կողմերն իրենց երկկողմ հարաբերություններում գործում են ավիացիոն անվտանգության չափորոշիչներին, և այնքանով, որքանով դրանք կիրառելի են Պայմանավորվող կողմերի նկատմամբ, Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության կողմից հաստատված և Կոնվենցիայի հավելվածներ հանդիսացող «Առաջարկվող գործելակերպին» համապատասխան, և պետք է պահանջեն, որ իրենց գրանցամատյանում ընդգրկված օդանավ շահագործողները, այն շահագործողները, որոնց գործունեության հիմնական վայրը կամ մշտապես գտնվելու վայրը իրենց տարածքում է, և իրենց տարածքում օդանավակայան շահագործողները գործեն ավիացիոն անվտանգության այդ դրույթներին համապատասխան: Սույն կետում անվտանգության չափորոշիչներին հղումը ներառում է ցանկացած տարբերություն, որի մասին ծանուցել է տվյալ Պայմանավորվող կողմը: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է մյուս կողմին նախապես տեղեկացնի որևէ տարբերության մասին ծանուցելու իր մտադրության մասին:

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ապահովի, որ արդյունավետ միջոցներ ձեռնարկվեն իր տարածքում օդանավերը պաշտպանելու, ուղևորներին և նրանց ձեռքի իրերը զննելու համար և անձնակազմերի, բեռների (ներառյալ գրանցված ուղեբեռը) և օդանավի պաշարների համապատասխան ստուգումներ իրականացնելու համար նախքան օդանավ նստելը և նստելու կամ բեռնելու ընթացքում, և որ՝ այդ միջոցները համարժեք լինեն սպառնալիքի մեծացմանը դիմակայելուն: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ համաձայնում է, որ իր ավիաընկերություններից կարող է պահանջվել պահպանել մյուս Պայմանավորվող կողմի կողմից պահանջվող՝ 3-րդ կետում նշված ավիացիոն անվտանգության դրույթների ապահովմանը այդ Պայմանավորվող կողմի պետության տարածք մուտք գործելու, մեկնելու և պետության տարածքում գտնվելու ժամանակ: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ նաև պետք է բարյացակամ դիտարկման արժանացնի որոշակի սպառնալիքի դիմակայմանն ուղղված անվտանգության հատուկ բանական միջոցներ ձեռնարկելու մյուս Պայմանավորվող կողմի յուրաքանչյուր խնդրանք:

5. Երբ տեղի է ունենում քաղաքացիական օդանավի ապօրինի զավթման միջադեպ կամ միջադեպի սպառնալիք կամ նման օդանավի, նրա ուղևորների և անձնակազմի, օդանավակայանների կամ անօդանավագացիոն միջոցների անվտանգության դեմ ուղղված այլ անօրինական գործողություններ, Պայմանավորվող կողմերը պետք է միմյանց աջակցեն՝ դյուրացնելով կապը, և այլ համապատասխան միջոցներով՝ ուղղված նման միջադեպը կամ սպառնալիքը հնարավորինս արագ կասեցնելուն կյանքի համար նվազագույն ռիսկայնությամբ:



## ՀՈԴՎԱԾ 11

### Թռիչքային անվտանգությունը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է ցանկացած ժամանակ պահանջել խորհրդակցությունների անցկացում՝ կապված մյուս Պայմանավորվող կողմի թռիչքային անձնակազմերին, օդանավերին կամ նրանց շահագործմանը առնչվող որևէ ոլորտում անվտանգության չափորոշիչների հետ: Այդ խորհրդակցությունները պետք է տեղի ունենան նման պահանջի ներկայացման օրվանից 30 օրվա ընթացքում:

2. Եթե նման խորհրդակցությունների արդյունքում մի Պայմանավորվող կողմը գտնում է, որ մյուս Պայմանավորվող կողմը արդյունավետորեն չի պահպանում և կիրառում անվտանգության չափորոշիչները որևէ նման ոլորտում, որոնք առնվազն հավասար են այդ պահին Չիկագոյի կոնվենցիայի համաձայն հաստատված նվազագույն չափորոշիչներին, առաջին Պայմանավորվող կողմը պետք է ծանուցի մյուս Պայմանավորվող կողմին նման բացահայտումների և այն քայլերի մասին, որոնք անհրաժեշտ են համարվում կատարել այդ նվազագույն չափորոշիչներին համապատասխանեցվելու համար, և որ այդ մյուս Պայմանավորվող կողմը պետք է ձեռնարկի համապատասխան ուղղիչ գործողություններ: Մյուս Պայմանավորվող կողմից 15 օրվա ընթացքում կամ, Պայմանավորվող կողմերի միջև համաձայնեցված ավելի երկար ժամանակահատվածում համապատասխան գործողություն ձեռնարկելու ձախողումը պետք է հիմք հանդիսանա սույն Համաձայնագրի 6-րդ Հոդվածի կիրառման համար:

3. Չնայած Չիկագոյի կոնվենցիայի 33-րդ Հոդվածում նշված պարտավորություններին՝ Պայմանավորվող կողմերը համաձայնվում են, որ մի Պայմանավորվող կողմի ավիաընկերության կամ ավիաընկերությունների կողմից դեպի մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածք կամ տարածքից սպասարկելիս շահագործվող ցանկացած օդանավ մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում գտնվելիս կարող է դառնալ զննման առարկա մյուս Պայմանավորվող կողմի լիազորված ներկայացուցիչների կողմից՝ ստուգելու համար օդանավում և օդանավի շրջակայքում օդանավի փաստաթղթերի և դրա անձնակազմի փաստաթղթերի վավերությունը և օդանավի ու դրա սարքավորումների ակնհայտ վիճակը (սույն Հոդվածում կանվանվի «կառամատուցային տեսչական ստուգում»)՝ պայմանով, որի դա չի հանգեցնի չվերթի անհարկի հետաձգման:

4. Եթե որևէ կառամատուցային տեսչական ստուգումը կամ կառամատուցային տեսչական ստուգումների շարքը հիմք են տալիս.

a) լուրջ մտահոգությունների, որ օդանավը կամ օդանավի շահագործումը չի համապատասխանում այդ պահին Չիկագոյի կոնվենցիայի համաձայն սահմանված նվազագույն չափորոշիչներին, կամ

b) լուրջ մտահոգությունների, որ բացակայում են այդ պահին Չիկագոյի կոնվենցիայի համաձայն սահմանված թռիչքային անվտանգության չափանիշների արդյունավետ պահպանումը և վարչարարությունը,

ստուգումն իրականացնող Պայմանավորվող կողմը պետք է, կոնվենցիայի 33-րդ հոդվածի նպատակներով, ազատ լինի եզրակացնելու, որ այն պահանջները, որոնց ներքո տրվել կամ վավեր են ճանաչվել այդ օդանավի կամ այդ օդանավի անձնակազմի վերաբերյալ վկայականը կամ արտոնագրերը, կամ այն պահանջները, որոնց

համաձայն շահագործվում է տվյալ օդանավը, հավասար չեն կամ չեն համապատասխանում Կոնվենցիայի համաձայն սահմանված նվազագույն չափանիշներին:

5. Այն դեպքում, երբ մի Պայմանավորվող Կողմի ավիաընկերության կամ ավիաընկերությունների ներկայացուցչի կողմից մերժվել է սույն Հոդվածի վերոհիշյալ 3-րդ կետի համաձայն օդանավի կառամատուցային տեսչական ստուգումը անցկացնելու նպատակով մուտքը, մյուս Պայմանավորվող Կողմը ազատ է ենթադրելու, որ ծագում են սույն Հոդվածի վերոհիշյալ 4-րդ կետում նշված լուրջ մտահոգություններ, և կատարելու այդ կետում նշված եզրահանգումները:

6. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի իրավունք է վերապահվում անմիջապես դադարեցնելու կամ փոփոխելու մյուս Պայմանավորվող կողմի ավիաընկերության շահագործման լիազորությունը այն դեպքում, երբ առաջին Պայմանավորվող կողմը կառամատուցային տեսչական ստուգման, կառամատուցային տեսչական ստուգումների շարքի, կառամատուցային տեսչական ստուգման մուտքի մերժման, խորհրդակցության կամ այլ բանի արդյունքում եզրակացնում է, որ անհապաղ գործողության ձեռնարկումը կարևոր է ավիաընկերության շահագործման անվտանգության համար:

7. Սույն Հոդվածի 2-րդ կամ 6-րդ կետերի համաձայն Պայմանավորվող կողմերից մեկի նախաձեռնած որևէ գործողություն պետք է դադարեցվի այդ գործողության համար հիմք հանդիսացած հանգամանքի վերանալու դեպքում:

8. Թռիչքային պիտանության վկայականները, որակավորման վկայականները և արտոնագրերը, որոնք տրվել կամ վավեր են ճանաչվել Պայմանավորվող կողմերից մեկի կողմից և դեռևս ուժի մեջ են, պետք է վավեր ճանաչվեն մյուս Պայմանավորվող կողմի կողմից՝ սույն Համաձայնագրում նշված հաղորդակցությունների շահագործման նպատակով, պայմանով, որ նման վկայականները կամ արտոնագրերն առնվազն հավասար են կամ համապատասխանում են այն նվազագույն չափորոշիչներին, որ սահմանված են կամ կարող են սահմանվել համաձայն Չիկագոյի կոնվենցիայի: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, այնուամենայնիվ, իրավունք ունի մերժելու ճանաչել իր սեփական տարածքի վրայով թռիչքների նպատակով որակավորման այն վկայականները և արտոնագրերը, որոնք տրված են իր պետության քաղաքացիներին կամ վավերացվել են նրանց համար մյուս Պայմանավորվող կողմի կամ ցանկացած այլ պետության կողմից:

9. Եթե մի Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունների կողմից ցանկացած անձին կամ նշանակված ավիաընկերությանը (ավիաընկերություններին) կամ սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցությունները շահագործող օդանավին տրված արտոնագրերի կամ վկայականների՝ սույն հոդվածի վերոնշյալ 8-րդ կետում նշված արտոնությունները կամ պայմանները տարբերվում են Չիկագոյի կոնվենցիայով հաստատված չափորոշիչներից, և այդ տարբերության մասին տեղեկացվել է Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությանը, մյուս Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունները կարող են պահանջել խորհրդակցություններ այդ Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունների հետ՝ սույն Համաձայնագրի 18-րդ Հոդվածի համաձայն, որպեսզի բավարար ապացույցներ ունենան, որ այդ գործելակերպը ընդունելի է իրենց համար: Գոհացուցիչ

համաձայնության չգալը հիմքեր կստեղծի սույն Համաձայնագրի 6-րդ Հոդվածի կիրառման համար:

## ՀՈԴՎԱԾ 12

### Օրենքների և կանոնակարգերի կիրառումը

1. Պայմանավորվող կողմերից մեկի այն օրենքները և կանոնակարգերը, որոնք կարգավորում են միջազգային օդային հաղորդակցություններ իրականացնող օդանավերի՝ այդ պետության տարածք մուտք գործելու կամ պետության տարածքից մեկնելու կամ նշված պետության տարածքում այդպիսի օդանավի շահագործման և նավիգացիայի հետ կապված հարցերը, կիրառվում են նաև մյուս Պայմանավորվող կողմի ավիաընկերության կամ ավիաընկերությունների նկատմամբ:

2. Պայմանավորվող կողմերից մեկի այն օրենքները և կանոնակարգերը, որոնք կարգավորում են ուղևորների, անձնակազմերի, ուղեբեռի, բեռի կամ փոստի՝ իր պետության տարածք փոխադրելու, տարածքում գտնվելու կամ պետության տարածքից տեղափոխելու հետ կապված հարցերը, ներառյալ մուտքի, ելքի, արտագաղթի, ներգաղթի, անձնագրերի, մաքսատուրքերի, արտարժույթի, առողջության և կարանտինի վերաբերյալ կանոնները, պետք է կիրառվեն մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերության կամ ավիաընկերությունների օդանավերով փոխադրվող ուղևորների, անձնակազմի, ուղեբեռի, բեռի և փոստի նկատմամբ առաջին Պայմանավորվող պետության տարածքում գտնվելու ժամանակ:

3. Պայմանավորվող կողմերից որևէ մեկի տարածքով ուղիղ տարանցմամբ փոխադրվող ուղևորները, ուղեբեռը և բեռը, որոնք մնում են այդ նպատակի համար նախատեսված տարածքում՝ բացառությամբ ավիացիոն անվտանգության ապահովման նպատակով իրականացվող միջոցառումների, պետք է ենթարկվեն ոչ ավել, քան պարզեցված ստուգման: Ուղիղ տարանցմամբ փոխադրվող ուղեբեռը և բեռը պետք է ազատվեն մաքսատուրքերից և այլ նմանատիպ հարկերից:

## ՀՈԴՎԱԾ 13

### Վիճակագրական տվյալների տրամադրումը

Մի Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունները պետք է մյուս Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանություններին, վերջիններիս խնդրանքի դեպքում, տրամադրեն այնպիսի պարբերական կամ այլ վիճակագրական տեղեկատվություն, որը ողջամտորեն անհրաժեշտ կլինի սույն Հոդվածում առաջինը նշված Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունների կողմից համաձայնեցված հաղորդակցություններում ապահովվող տարողության վերանայման նպատակով: Նման տեղեկատվությունը պետք է ընգրկի այն բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ են՝ որոշելու այդ ավիաընկերությունների կողմից համաձայնեցված հաղորդակցություններում իրականացվող փոխադրումների ծավալը և նման փոխադրումների ելակետերն ու նպատակակետերը:

## ՀՈԴՎԱԾ 14

### Հարկումը և եկամուտների փոխանցումը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերություն մյուս Պայմանավորվող կողմի տարածքում ազատվում է համաձայնեցված հաղորդակցությունների շահագործումից գոյացած եկամուտների կամ շահույթի նկատմամբ եկամտահարկից կամ այլ համանման հարկերից:

2. Պայմանավորվող կողմերի նշանակված ավիաընկերությունները ազատ են փոխանցելու վաճառքի տարածքում ծախսերը գերազանցած եկամուտները:

3. Նման փոխանցումները պետք է կատարվեն ազատ փոխարկվող արժույթով՝ փոխանակման պաշտոնական դրույքաչափի համաձայն, և դրանք չպետք է ենթակա լինեն որևէ գանձման, սահմանափակման, հարկման կամ ուշացման, բացառությամբ սովորական բանկային գանձումների և ընթացակարգերի:

4. Եթե որևէ Պայմանավորվող կողմ սահմանափակումներ է սահմանում մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունների կողմից ծախսերի նկատմամբ գոյացած եկամուտների փոխանցման վրա, վերջինս պետք է իրավունք ունենա սահմանելու հավասար հիմքերով փոխադարձ սահմանափակումներ առաջին Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունների նկատմամբ:

5. Հարկերի մասով կգերակայեն 2005 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Սիրիայի Արաբական Հանրապետության Կառավարության միջև եկամուտների կրկնակի հարկումից խուսափելու մասին» կոնվենցիայի դրույթները:

## ՀՈԴՎԱԾ 15

### Ավիաընկերության ներկայացուցչությունը և վաճառքը

1. Մի Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունը կամ ավիաընկերությունները, համաձայն մյուս Պայմանավորվող կողմի՝ մուտք գործելուն, կացությանը և զբաղվածությանը վերաբերող օրենքների և կանոնակարգերի, իրավունք կունենան մյուս Պայմանավորվող կողմի տարածք բերելու և այնտեղ պահելու իրենց սեփական՝ վարչական, տեխնիկական, շահագործումների գծով և այլ մասնագետներից բաղկացած անձնակազմը, որն անհրաժեշտ է օդային հաղորդակցությունների շահագործման համար:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությանն իրավունք է տալիս իր տարածքում ներգրավվել օդային փոխադրումների վաճառքում՝ օգտագործելով փոխադրման իր սեփական փաստաթղթերը, վաճառքի գործակալների միջոցով, այն Պայմանավորվող կողմի ազգային արժույթով, որի տարածքում իրականացվում է վաճառքը, նաև ցանկացած այլ ազատ փոխարկելի արժույթով, եթե դա արգելված չէ այդ Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ձեռնպահ կմնա մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերության՝ նման փոխադրումները

վաճառելու, և ցանկացած անձի՝ այդ փոխադրումները գնելու իրավունքը սահմանափակելուց:

## ՀՈԴՎԱԾ 16

### Գանձումներ սպառողներից

1. Պայմանավորվող կողմերից ոչ մեկը մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունների նկատմամբ չի սահմանի կամ թույլատրի սահմանել ավելի բարձր գանձումներ, քան այն գանձումները, որոնք սահմանված են նմանատիպ միջազգային օդային հաղորդակցություններ իրականացնող այլ ավիաընկերությունների նկատմամբ:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կխրախուսի սպառողներից գանձումների վերաբերյալ խորհրդակցությունների անցկացումը իր գանձող իրավասու իշխանությունների և այդ գանձող իշխանությունների կողմից ապահովվող ծառայություններից և միջոցներից օգտվող ավիաընկերությունների միջև, ըստ նպատակահարմարության, այդ ավիաընկերությունների ներկայացուցիչներից բաղկացած կազմակերպությունների միջոցով: Սպառողներից գանձվող վճարների փոփոխությունների մասին պետք է հիմնավորված ծանուցում ուղարկվի նման սպառողներին, որպեսզի նրանք հնարավորություն ունենան իրենց կարծիքը հայտնելու մինչև փոփոխություններ կատարելը: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ հետագայում կխրախուսի իր գանձող իրավասու իշխանությունների և նման օգտագործողների միջև նման գանձումների մասին տեղեկատվության համապատասխան փոխանակումը:

## ՀՈԴՎԱԾ 17

### Փոխադրումների ծրագրերի հաստատումը

1. Մի Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունը կամ ավիաընկերությունները պետք է շահագործումն սկսելուց առնվազն երեսուն (30) օր առաջ մյուս Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանություններին հաստատման համար ներկայացնեն իրենց կամ իրենց փոխադրումների ծրագրերը (երթևեկության ամառային և ձմեռային ժամանակաշրջանների համար): Մասնավորապես, ծրագիրը պետք է ներառի չվացուցակները, հաղորդակցությունների հաճախականությունը և շահագործվող օդանավերի տեսակները: Ավիացիոն իշխանությունները նման փոխադրումների ծրագրի վերաբերյալ իրենց որոշումները ներկայացնում են քսան (20) օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ համապատասխան ավիաընկերությունը հաստատման համար ներկայացնում է իր ծրագիրը:

2. Փոխադրումների ծրագրում յուրաքանչյուր փոփոխություն, ինչպես նաև հավելյալ չվերթերի իրականացման թույլտվության վերաբերյալ խնդրանքները մի Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերության կամ ավիաընկերությունների կողմից կներկայացվեն մյուս Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունների

հաստատմանը: Փոփոխության կամ հավելյալ չվերթերի համար նման խնդրանքներին ավիացիոն իշխանությունների կողմից արագ կերպով կտրվի ընթացք:

### **ՀՈԴՎԱԾ 18 Խորհրդակցություններ**

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է ցանկացած ժամանակ պահանջել անցկացնել խորհրդակցություններ սույն Համաձայնագրի իրականացման, մեկնաբանման, կիրառման կամ փոփոխման կամ սույն Համաձայնագրի պահանջներին համապատասխանության ապահովման վերաբերյալ: Նման խորհրդակցությունները, որոնք կարող են անցկացվել ավիացիոն իշխանությունների միջև, պետք է սկսվեն մյուս Պայմանավորվող կողմի կողմից գրավոր խնդրանքի ստանալուց հետո վաթսուն (60) օրվա ընթացքում, եթե Պայմանավորվող կողմերը այլ կերպ չեն պայմանավորվել:

### **ՀՈԴՎԱԾ 19 Փոփոխություններ**

1. Եթե Պայմանավորվող կողմերից մեկը ցանկանում է փոփոխել սույն Համաձայնագրի որևէ դրույթ, դա պետք է կատարվի սույն Համաձայնագրի 18-րդ Հոդվածի համաձայն անցկացված խորհրդակցություններից հետո:

2. Սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Նման փոփոխությունները կձևակերպվեն առանձին արձանագրություններով, որոնք կկազմեն սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 25-րդ Հոդվածի դրույթների համաձայն:

3. Եթե փոփոխությունները վերաբերում են միայն հավելվածի դրույթներին, դրանք կարող են ուղղակիորեն համաձայնեցվել երկու Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների միջև և ուժի մեջ կմտնեն ավիացիոն իշխանությունների կողմից համաձայնեցված ամսաթվից:

### **ՀՈԴՎԱԾ 20 Վեճերի լուծումը**

1. Պայմանավորվող կողմերի միջև սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման շուրջ ցանկացած վեճ ծագելու դեպքում Պայմանավորվող կողմերը առաջին հերթին պետք է ձգտեն այն լուծել բանակցությունների միջոցով:

2. Եթե Պայմանավորվող կողմերը չեն կարողանում լուծում գտնել բանակցությունների միջոցով, նրանք կարող են համաձայնել վեճը ներկայացնել որևէ անձի կամ մարմնի՝ որոշում կայացնելու համար. եթե նրանք նման համաձայնություն չեն կայացնում, Պայմանավորվող կողմերից որևէ մեկի խնդրանքով, վեճը կարող է ներկայացվել երեք արբիտրներից բաղկացած տրիբունալ, որոնցից մեկական արբիտր

նշանակվում է յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի կողմից, իսկ երրորդը նշանակվում է այդ երկու նշանակվածների կողմից: Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը արբիտրին նշանակում է վաթսուն (60) օրվա ընթացքում՝ սկսած այն ամսաթվից, երբ Պայմանավորվող կողմերից մեկը մյուսից դիվանագիտական ուղիներով ծանուցում է ստանում վեճն այդպիսի տրիբունալում կարգավորելու մասին, իսկ երրորդ արբիտրը կնշանակվի հետագա վաթսուն (60) օրվա ընթացքում: Եթե սահմանված ժամկետում որևէ Պայմանավորվող կողմ չի նշանակում արբիտր, Պայմանավորվող որևէ կողմի խնդրանքով՝ Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության Խորհրդի նախագահը կարող է նշանակել արբիտր կամ արբիտրներ՝ ինչպես պահանջվում է: Բոլոր դեպքերում երրորդ արբիտրը պետք է լինի երրորդ երկրի քաղաքացի, և նա պետք է գործի որպես արբիտրաժային տրիբունալի նախագահ: Արբիտրաժային տրիբունալն իր որոշումը կայացնում է ձայների մեծամասնությամբ: Բոլոր մյուս առումներով արբիտրաժային տրիբունալն է որոշում իր սեփական ընթացակարգը:

3. Պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել սույն Հոդվածի 2-րդ կետում նշված ցանկացած որոշում:

4. Եթե Պայմանավորվող կողմերից մեկը չի կատարում սույն Հոդվածի 2-րդ կետում նշված որևէ որոշման պահանջ, մյուս Պայմանավորվող կողմը կարող է սահմանափակել, կասեցնել կամ չեղարկել ցանկացած իրավունք կամ արտոնություն, որը նա տվել է սույն Համաձայնագրի ուժով՝ նման խախտումը կատարած մյուս Պայմանավորվող կողմին:

5. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կատարում է իր արբիտրի հետ կապված ծախսերը և նրա համար անհրաժեշտ փոխհատուցումը. երրորդ արբիտրի վճարը և նրա համար անհրաժեշտ ծախսերը, ինչպես նաև արբիտրաժի գործունեությամբ պայմանավորված ծախսերը հավասարապես բաշխվում են Պայմանավորվող կողմերի միջև:

#### **ՀՈԴՎԱԾ 21** **Գրանցում ԻԿԱՕ-ում**

Սույն Համաձայնագիրը և դրա ցանկացած փոփոխություն ուժի մեջ մտնելուց հետո գրանցվում են Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունում:

#### **ՀՈԴՎԱԾ 22** **Վերնագրեր**

Սույն Համաձայնագրի յուրաքանչյուր հոդվածի վերնագրերը միայն վկայակոչման և հարմարության համար են և որևէ կերպ չեն որոշում կամ սահմանափակում սույն Համաձայնագրի գործողության ոլորտը կամ նպատակը:

### ՀՈԴՎԱԾ 23

#### Բազմակողմ կոնվենցիաներին համապատասխանությունը

Եթե երկու Պայմանավորվող կողմերի համար ուժի մեջ է մտնում ավիացիայի ոլորտի բազմակողմ կոնվենցիա, ապա նման կոնվենցիայի դրույթները գերակայում են: Սույն Համաձայնագրի 18-րդ Հոդվածի համաձայն՝ կարող են անցկացվել խորհրդակցություններ՝ որոշելու համար, թե սույն Համաձայնագիրը որքանով է ենթակա նման բազմակողմ կոնվենցիայի դրույթներին:

### ՀՈԴՎԱԾ 24

#### Դադարեցումը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է ցանկացած ժամանակ դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցել մյուս Պայմանավորվող կողմին սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր որոշման մասին: Նման ծանուցումը պետք է միաժամանակ ուղարկվի Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությանը:

2. Նման դեպքում սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցվում է ծանուցումը մյուս Պայմանավորվող կողմի ստանալու ամսաթվից տասներկու (12) ամիս անց՝ կեսգիշերին (ծանուցումն ստացած Պայմանավորվող կողմի տեղական ժամով), եթե մինչև այս ժամանակահատվածի ավարտը ծանուցումը փոխադարձ համաձայնությամբ հետ չի վերցվում: Մյուս Պայմանավորվող կողմի կողմից ծանուցման ստացման հավաստման բացակայության դեպքում ծանուցումը համարվում է ստացված Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության ստանալուց տասնչորս (14) օր հետո:

### ՀՈԴՎԱԾ 25

#### Ուժի մեջ մտնելը

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ամսին հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը, որի ընթացքում դիվանագիտական ուղիներով ստացվել է սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին մի Պայմանավորվող կողմից մյուսին ուղղված վերջին գրավոր ծանուցումը, և ուժի մեջ կմնա այնքան ժամանակ, քանի դեռ Պայմանավորվող կողմերից մեկը սույն Համաձայնագրի 24-րդ Հոդվածի համաձայն չդադարեցնի այն:

